ԵՐԵՔ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. ՀՈՎ. 1.11-28

11 Իրանների մէջ եկաւ, եւ իրանները նորան չընդունեցին: 12 Սակայն նրանց, ովքեր ընդունեցին նրան և հավատացին նրա անվանը, իշխանություն տվեց Աստծու որդիները լինելու: 13 Նրանք չծնվեցին արյունից, ո՛չ էլ մարմնի ու մարդու կամքից, այլ ծնվեցին Աստծուց:

29 Հաջորդ օրը Հովհաննեսը տեսավ Հիսուսին, որ գալիս էր իր մոտ, ու ասաց. ***Ահա Աստծու Գառը, որ իր վրա է վերցնում աշխարհի մեղքը:*** *30 Սա է, որի մասին ես ասում էի. "Ինձանից հետո գալիս է մեկը, որ ինձանից մեծ է, որովհետև նա կար ինձանից առաջ: 31 Ես չէի ճանաչում նրան: Սակայն որպեսզի նա հայտնի լինի Իսրայելին, դրա համար եկա ջրով մկրտելու":*

32 Եվ Հովհաննեսը վկայեց ու ասաց. Տեսնում էի Հոգին, որ աղավնու պես իջնում էր երկնքից և հանգչում նրա վրա: 33 Ես նրան չէի ճանաչում, բայց նա, ով ինձ ուղարկեց ջրով մկրտելու, ինձ ասաց. "Ում վրա տեսնես, որ Հոգին իջնում է ու մնում, նա՛ է Սուրբ Հոգով մկրտողը": 34 Ու ես տեսա և վկայեցի, թե՝ "Սա է Աստծու Որդին":

I. ԱՌԱՋԻՆ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԴԱ ՀՈԳՈՒ ՎԵՐԱԾՆՈՒՆԴՆ Է:

13 Նրանք չծնվեցին արյունից, ո՛չ էլ մարմնի ու մարդու կամքից, այլ ծնվեցին Աստծուց:

- *Հիսուսն ասաց, եթե մարդը վերստին չծնվի չի կարող տեսնել Աստծո արքայությունը (Հովհ. 3.3):*
- *Եթե մարդը ջրից և Հոգուց չծնվի, չի կարող մտնել Աստծո թագավորությունը: (Հովհ. 3.5):*
- *Մարմնից ծնվածը մարմին է, Հոգուց ծնվածը հոգի (Հովհ. 3.4,6):*
- ***Սուրբ Հոգին մեզ մկրտեց քրիստոսի մարմնի մեջ: Նա մեզ դրեց Քրիստոսի ձեռքերի մեջ:***

  Աստված մեր Փրկիչը, իր քաղցրությունն ու մարդասիրությունը հայտնեց և փրկեց ոչ թե մեր կատարած արդար գործերի համար, այլ պարզապես իր ողորմած լինելու համար: ***Նոր ծնունդ տվեց մեզ մկրտությամբ և Սուրբ Հոգու միջոցով վերանորոգեց մեզ (Տիտոս 3.3-4):***

  Գաղ. 3.27 - Վասնզի ամենքդ՝ որ Քրիստոսում մկրտվեցիք, Քրիստոսին հագած էք:

  Եփ. 5.26 - Որ նորան սրբացնէ՝ մաքրելով ջրի ավազանովը՝ խօսքի միջոցով.

  Օրինակ: *երեխան մոր որովայնում ապրում է ջրի մեջ և սնունդ է առնում իր մորից ու ճանաչում է իր մոր ձայնը:*

II. ՋՐԻ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՔՈ ՎԵՐԱԾՆՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆ Է:

31 Սակայն որպեսզի ՆԱ հայտնի լինի Իսրայելին, դրա համար եկա ջրով մկրտելու:

Ինչո՞ւ մկրտվել

- ***Որովհետև ուզում ես հետևել Քրիստոսի օրինակին:***

«Եվ եղավ, որ այն օրերին Հիսուսը Գալիլիայի Նազարեթից եկավ ու Հովհաննեսից մկրտվեց Հորդանանի մեջ»: Մարկոս 1.9

Այս մկրտությունը նշանավորում է 2 Կորնթացիս 5.21-ում արտահայտվածի սկիզբը. «Որովհետեւ Աստուած նորան, որ մեղք չգիտէր, մեզ համար մեղք արաւ. որ մենք Աստուծոյ արդարութիւնը լինենք նորանում»: Երբ Հիսուսը մկրտվեց, նա «մեղք չգիտեր» և չէր մեղանչել իր կյանքի ընթացքում, բայց խաչի վրա մեր մեղքը դրվեց Նրա վրա, և նա մեղք դարձավ մեր փոխարեն, որպեսզի մենք՝ որպես իրեն և նրա ավարտված գործին հավատացողներ, վերցնենք Նրա արդարությունը մեզ վրա:

Որովհետև Քրիստոսն է դա պատվիրել:

Մատ. 28.19-20 - Ուրեմն գնացէք բոլոր ազգերը աշակերտեցէք, ***նորանց մկրտելով*** *Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու անունով.*

Ո՞վ պետք է մկրտվի

Ցանկացած անձնավորություն, որ որոշում է կայացրել հավատալ Քրիստոսին, պետք է մկրտվի:

«Եվ նրանք, որ ուրախությամբ ընդունեցին նրա խոսքերը, մկրտվեցին»: Գործք 2.41 «Բայց երբ հավատացին Փիլիպպոսին, որ Աստծո թագավորության ու Հիսուս Քրիստոսի անվան մասին էր քարոզում, մկրտվում էին թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք»: Գործք 8.12

III. ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԽՈՍՏՈՒՄԸ (ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ) ՔՐԻՍՏՈՍԻ ՈՒՍՄՈՒՆՔՆ Է:

32 Եվ Հովհաննեսը վկայեց ու ասաց. Տեսնում էի Հոգին, որ աղավնու պես իջնում էր երկնքից և հանգչում նրա վրա: 33 Ես նրան չէի ճանաչում, բայց նա, ով ինձ ուղարկեց ջրով մկրտելու, ինձ ասաց. "Ում վրա տեսնես, որ Հոգին իջնում է ու մնում, նա՛ է Սուրբ Հոգով մկրտողը": 34 Ու ես տեսա և վկայեցի, թե՝ "Սա է Աստծու Որդին":

Գործ. 2.37-39 Այս լսելով՝ ներկաները զղջացին իրենց սրտերում եւ ասացին Պետրոսին եւ միւս առաքեալներին. Ի՞նչ պետք է անենք, եղբայրնե՛ր: Պետրոսը նրանց ասաց.

1. *Ապաշխարեցէք, (μετανοέω, metanoeō - change of mind, մտքի փոփոխություն, փոխեցեք ձեր ընթացքը)*
2. *եւ ձեզանից իւրաքանչիւրը թող մկրտուի Տէր Յիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերի թողութեան համար,*
3. *եւ պիտի ընդունէք Սուրբ Հոգու պարգեւը (մկրտությունը). որովհետեւ խոստումը ձեզ համար է, ձեր որդիների եւ բոլոր հեռաւորների համար, որոնց կը կանչի մեր Տէր Աստուածը:*

- ***Մար. 16.15-16 - Նրանք, ովքեր հավատում են, հայտնի կլինեն հետևյալ նշաններով.***

  1. *Իմ անունով չար ոգիներ պիտի հանեն,*
  2. *Նոր լեզուներով պիտի խոսեն,*
  3. *Ձեռքով օձ պիտի բռնեն առանց խայթվելու (Ծննդոց 3.14-15),*
  4. *Եվ եթե մահացու որև է թույն էլ խմեն, չպիտի վնասվեն,*
  5. *Հիվանդների վրա ձեռք պիտի դնեն և բժշկեն նրանց:*

- ***Մար. 16.20 - Եվ նրանց քարոզչությունը հաստատվում էր իրենց տրված բոլոր նշաններով, որ ուղեկցում էին իրենց: Ամեն:***

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ